մարտիկների ու գործիչների վերջին մասը և կառավարությունը անցան փրփրայոյզ Արաքսը՝ տանելով իրենց հետ Հայաստանի անկախության դրօշը, Հայաստանի պետականության գաղափարը:

Սկսում էր անկախության պայքարի մի նոր շրջան:

*

Թիւրքերն ու բոլշևիկները հասան իրենց նպատակին. Սևրի դաշնագիրը դարձաւ անպէտք թղթի կտոր: Երկու տարի յետոյ, Լոզանում, հաւաքեցին Սևրի գերեզմանափորները: Իմպերիալիստական շնագայլերի ժողովին եկել էին աղերսելու և հայերը — Հ.Հ.Պատուիրակութիւնը յանձին Ա. Ահարոնեանի ու Ա. Խատիսեանի, Ազգ.Պատուիրակութեան նոր նախագահ Գ. Նորատունկեանը, բազմաթիւ հայասէրներ՝ զուիցերացի Դը Մորզիէ, Քրաֆթ-Բոնար, ամերիկացիներ, անգլիացիներ, բելգիացիներ, ֆրանսացիներ, սկանդինաւցիներ: Երկու հարիւր հազար ամերիկեան եկեղեցիներ, Եւրոպայի մտաւորականութեան ընտրանին, աշխարհի առաջաւոր մտքերը դիմում արին: Հայ ներկայացուցիչները դերմարդկային ճիգ թափեցին: Ամէն ինչ անցաւ իզուր...

Թիւրքը մենակ չէր Լոզանում. նրա յետևը կանգնած էր Մոսկուան. «Խորհրդային Ռուսաստանի ուրուականը սաւառնում էր Լոզանի խորհրդաժողովի կանաչ սեղանի վրա, յայտարարեց Չիչերինը, և հէնց նա էր, որ խանգարում էր մեծ պետութիւններին յարձակուել ու ճզմել փոքրիկ Թիւրքիան»:*) Խորհրդային Ռուսաստանը ոչ միայն չխանգարեց, այլ և օգնեց, որ Թիւրքիան յարձակուի ու ճզմէ փոքրիկ Հայաստանը:

Հայաստանն ու հայկական հարցը Լոզանում էլ սոսկ գործիք եղան մեծ պետութիւնների ձեռքին. անգլիացիների համար նա ազդու զէնք էր Մոսուլի խնդիրը կարգադրելու համար, ֆրանսացիների ձեռքին՝ կտրոնների ապահովութեան միջոց: Անգամ «անչահախնդիր» և «իդէալիստ» Ամերիկան հայկական մուրհակով փորձեց ապահովել իր նեղ, եսական շահերը և օգոս. 6-ին, Ուշիում, բարեկամութեան դաշնագիր ստորագրեց Թիւրքիայի հետ**):

1923թ. յուլ. 24-ին ստորագրուեց Լոզանի դաշնագիրը: Բրեստ—Լիտովսկից յետոյ ամենախայտառակ դաշնագիրն էր այդ, որ ստորագրուում էր պետութիւնների միջև: Դաշնակիցների յայտարարած սկզբունքներից և ո՛չ մէկը չէր պահպանուած: Սևրի դաշնագրի և ո՛չ մի կէտ չէր մնացել: Կատարեալ անձնատուութիւն դաշնակիցների կողմից: Լոզանի դաշնագրում յիշատակութիւն չկար և Հայաստանի ու հայկական հարցի մասին: Կարծես թէ հայկական խնդիր բնաւ գոյութիւն ունեցած չլինէր: Զարաշուք անտեսում, որ ահարկու ուժգնութեամբ հարուածեց ամենքին՝ բոլոր հայերին

*) «Заря Востока», 6 ноября, 1927г.

**) Այս դաշնագրի դէմ էր, որ Հայաստանի Անկախութեան Կոմիտէն Զ. Զերարդի ու Վ. Գարտաշեանի ղեկավարութեամբ ուժգին պայքար մղեց և տապալեց նրան. 1927թ. յուն. 18-ին Մերակոյտը 50 քուէով 34-ի դէմ մերժեց նրա վաւերացումը: